

**Արագածոտնի փոխմարզպետ Նունե Մովսիսյանի ելույթը
Հայաստանի գրողների տանը Արեւշատ Ավագյանին նվիրված
հոբելյանական երեկոյի ժամանակ**

Ողջումում եմ բոլոր ներկաներին՝ գրողների միության նախագահ Է. Միլիտոնյանին, Արագածոտն մարզի գրական գործիչներին, ուսուցիչներին, աշակերտներին:

Այսօր գրողների միության տանը հավաքվել ենք՝ Աշտարակի պատվավոր քաղաքացի, գրող, գրապարակախոս, նկարիչ Արեւշատ Ավագյանին շնորհավորելու՝ գրական գործունեության համար, ի թիվս այլ պարգեւների, եւս մի նոր պարգեւի արժանանալու, ինչպես նաեւ նրա հեղինակությամբ „Առավուտը երբեք չի ուշանում,, գրքի լույս ընծայման կապակցությամբ:

Գիրքը սպասված է բոլորիս համար: Սիրելի գրողներ, ձեր երկնած յուրաքանչյուր գիրք, հաստատ իմացեք, սիրահարի համար սիրո խոստովանության, հիվանդին՝ բժշկության, փիլիսոփային՝ խորհելու, մանուկին՝ իմաստնանալու հիանալի միջոց է: Շնորհակալ ենք ձեզ, ձեր կատարած գործի համար: